

ԴԱՇՏԱԴԵՄԻ ԱՄՐՈՑԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Ալեքսանյան Տ. (ՀՀ մշակույթի նախարարության

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական
կենտրոն» ՊՈԱԿ, Հայաստան)

tigranalexanyan@yandex.ru

Բանալի բառեր՝ ամրոց, հուշարձան, ճարտարապետություն,
պատմություն, հնագիտություն, մշակույթ:

Դաշտադեմի միջնադարյան ամրոցը գտնվում է Արագածոտնի
մարզի Դաշտադեմ գյուղում (նախկինում Ներքին Թալին), Թալին
քաղաքից 5 կմ հարավ: Ամրոցը իշխող դիրք ունի Արարատյան
դաշտի նկատմամբ, սակայն ի տարբերություն միջնադարյան բերդ-
ամրոցների, զուրկ է բնական որևէ անառիկությունից: Ամրոցի
պաշտպանական համակարգը նրա բարձր պարսպապատերն են:

Դաշտադեմի ամրոցում տարբեր ժամանակներում և տարբեր
հատվածներում կատարվել են հնագիտական և
վերականգնողական աշխատանքներ: Այսպես, ՀՀ հուշարձանների
պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կողմից
կատարվող վերականգնման աշխատանքների ծրագրով 1989-1990
թթ. ամրոցի տարածքում կատարվել են պեղումներ, որի արդյունքում
բացվել են պարիսպների հյուսիսային հատվածը, միջնաբերդի և
հյուսիսային պարսպի միջև եղած տարածքը: 2005-2006 թթ.
Պատմամշակութային հուշարձանների պահպանության և
զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի շրջանակներում
կատարվել են Դաշտադեմի ամրոցի ամրակայման և
վերականգնման աշխատանքներ միջնաբերդի տարածքում: Հիշյալ
ծրագրի շրջանակներում Իտալիայի՝ հայկական մշակույթի
ուսումնասիրության և վերականգնման կենտրոնի մասնակցությամբ
պեղվել են Զաքարյանների պարսպի գլխավոր, կամարակապ մուտքի
ներսի հատվածը և աշտարակները:

Պետական ծրագրով 2011 թ. հոկտեմբերի 25-ին վերսկսվեցին Պաշտադեմի միջնադարյան ամրոցի պեղումները՝ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կողմից: Աշխատանքները կենտրոնացվեցին ամրոցի արևմտյան և հարավ-արևմտյան հատվածներում՝ միջնաբերդի և պարսպապատի միջև: Պեղման ենթակա ամբողջ տարածքը նախապես բաժանվեց 5x5 մ չափերի քառակուսիների, որոնցից յուրաքանչյուրը համարակալվեց թվով և լատինական այբուբենի տառերով:

Միջնաբերդի արևմտյան պատի և սալապատ հրապարակի միջև ընկած տարածքում պեղումների միջոցին բացվել են միջնաբերդի հիմքերը, որոնք ամբողջությամբ դրված են տուֆե ժայռի վրա: Այս ամբողջ հատվածը լցված էր շինարարական և տնտեսական աղբով: D-4 քառակուսուն բացվել են թոնրի մնացորդներ. պահպանված մասի բարձրությունը 55 սմ է, պատերի հաստությունը՝ 7 սմ, տրամագիծը՝ 90 սմ: Թոնիրը տեղադրված էր ժայռի մեջ նախապես փորված շրջանաձև փոսում: Թոնրի հարավային մասում պահպանվել էր նաև թոնրի քարաշար ակը:

Պեղումներ կատարվեցին նաև պարսպի հարավ-արևմտյան անկյունում՝ B-2-3 քառակուսիներում: Այս հատվածում պարսպի շարվածքի ներքին ճակատը գրեթե չէր երևում: Կատարված աշխատանքների արդյունքում պարզ ուրվագծվեց պարսպապատի շարվածքը, որի որոշ քարեր սակայն չէին պահպանվել: Միաժամանակ բացվում էր տուֆե սալահատակը:

Արևմտյան պարսպապատին կից կատարված աշխատանքների արդյունքում բացվեցին երկու հնձանների հորեր:

Գտնված հնագիտական նյութերը կարևոր տվյալներ են հաղորդում ամրոցի կենցաղի և մշակույթի վերաբերյալ:

THE EXCAVATION OF DASHTADEM FORTRESS

Aleksanyan T. (Ministry of Culture of the Republic of Armenia, “Research Center of Historical and Cultural Heritage” Non-Commercial State Organization, Armenia)